

49-10  
150a

Գ. Խ. ԱՆԴԵՐՍԵՆ

# ԱՆՃՈՈՒՆԻ



# ԲԱՂԻԿԸ

Նկարները Վ. ՎՈՐՈՆՆՅԱՆԻ

839.810  
4-58

ԼԶՈՎ.-ՍՆՎՆՈՎԹԱՆ ՅԵՐԿՐԱԹԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՍՏՈՎ.-ԴՈՆ. — 1936



62211

Арм.  
3-17552

839.8/5

Ա-58

Գ. Խ. ԱՆԴԵՐՍԵՆ

- 6 · NOV 2011

# ԱՆՃՈՌՆԻ ԲԱԴԻԿԸ

Թարգմ. Գ. ԳԵՎՈՐԳԵԱՆ



Арм.

6321

ԱԶՈՎ.-ՍԵՎԵՐՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՍՏՈՎ.-ԴՈՆ 1936

11 FEB 2013



4120-87

1393

Ինչքան լավ եր քաղաքից դուրս: Ամառ  
եր: Հաճարը դեղնում եր, վարսակը կանա-  
չին տալիս, խոտի դեզերը շարված եյին կա-  
նաչ մարգագետիններում: Դաշտերն ու մար-  
գագետինները շրջապատված եյին անտառ-  
ներով, փորտեղ կային խոր լճեր: Իսկապես  
փոր հիանալի յեր քաղաքից դուրս, գյուղում:  
Ամենաարևոտ տեղում կանգնած եր հին  
ավանը, շրջապատված խոր փոսերով: Ավանի  
պատերից մինչև ջուրը բռնված տարածու-  
թյունը ծածկված եր խոշոր կռատուկներով\*  
և այն ել այնքան բարձր, փոր փոքր յերե-  
խաներն ամբողջ հասակով կարող եյին կանգ-  
նել նրանց տակ: Այնտեղ մութ եր և ան-  
խնամ, ինչպես խիտ անտառում: Բազը նրա-  
տած եր մի անկյունում իր բնի վրա: Նա  
թուխս եր նստել ճուտեր հանելու համար,  
բայց բավականին ձանձրացել եր յերկար  
նստելուց:

\* Լոպուխ

Վերջապես ձվերը մեկը մյուսի հետևից սկսեցին ճեղքվել: «Պի-պի» լսվում էր ձվերի միջից: Ձվերի բոլոր դեղնուցները կենդանացել, դուրս ելին հանել իրենց գլխիկները:

— Ռապունալ, — պատասխանեց բաղը: Բաղիկները ձվերից արագ դուրս յեկան և սկսեցին դիտել չորս կողմը:

— Ինչքան մեծ է աշխարհը, — ասում էին բաղիկները: Այժմ պարզ է, վոր այստեղ նրանց համար ավելի արձակ էր, քան ձվի մեջ յեղած ժամանակ:

— Դուք կարծում եք, վոր սա ամբողջ աշխարհն է, — ասաց մայրը: — Վոչ, նա տարածվում է պարտեզի են կողմը, հեռու, շատ հեռու: Բայց



այնտեղ յես ինքս ել յերբեր չեմ յեղել: Դե՛, արդեն բոլորդ ել միասին եք, — և նա բարձրացավ տեղից: — Բայց վոչ, դեռ բոլորդ չեք, ամենամեծ ձուռն դեռ մնում է: Ինչքա՛ն յերկար տևեց նրա ճեղքվելը: Ճշմարիտ եմ ասում, շուտով բոլորովին կձանձրանամ նստելուց: Յեվ նա նորից նստեց ձվի վրա:

— Ե՛հ, ի՞նչպես են գործերդ, — հարցրեց պառավ բաղը, վորը յեկել էր այցելության:

— Չափազանց յերկար է քաշում այս ձվի գործը, — պատասխանեց թուխս նստած բաղը: — Վոչ մի կերպ չի ճեղքվում: Բայց դուք տեսնեյիք մյուսներին, — ինչ սքանչելի բաղիկներ են, կյանքումս այդպիսի բաղիկներ չեմ տեսել:

— Ապա ցույց տուր այն ձուռն, վորը չի ուղում ճեղքվել, — ասաց պառավ բաղը, — կարող ես ինձ հավատալ, վոր դա հնդկահավի ձուռն յե: Մեկ անգամ ինձ ել էյին այդպես ձեռք առել, շատ նեղություն քաշեցի ձուռտերիս հետ, վորովհետև հնդկահավերը ջրից վախենում են: Ինչե՛ր ասես, չեմ արել՝ վոտքերս գետին եմ զարկել, կանչել



եմ, բայց դրանից բան չի դուրս յեկել, ամենին չեմ կարողացել նրանց բշել ջուրը: Ապացույց տուր ձուռն: Դե, իհարկե, սա հնդկահավի ձու յե: Վե՛ր կաց, ի դուր մի նստի, ավելի լավ ե բաղիկներիդ սովորեցրու լողալ:

— Վո՛չ, ավելի լավ ե մի բիշ ել նստել, — պատասխանեց բաղը, — բանի վոր այդքան նստել եմ, մի բիշ ել կնստեմ:

Վերջապես ճեղքվեց և մեծ ձուռն: «Պի՛պ-պի՛պ» լավեց ձուռտի ձայնը: Զվի միջից դուրս յեկավ մի մեծ անճողների ձուռտ:

Բաղը նայեց նրան:

— Ի՛նչ մեծ բաղիկ ե, — ասաց նա: Զուռտերիցս վոչ մեկը նրան չի նմանում: Բայց սա հնդկահավիկ ել չե: Սակայն շուտով կպարզվի: Նա անպայման կմտնի ջուրը, թեկուզ հենց ստիպված լինեմ հրելու նրան:



Հետևյալ որը հիանալի յեղանակ եր: Կանաչ կռատուկները փայլում էյին արևի տակ: Բաղիկների մայրն ամբողջ ընտանիքով գնաց առվի մոտ և արագ թռավ ջուրը:

— Ռո՛պ-ռո՛պ, — կանչեց նա, և բաղիկները հետևեցին նրան: Զուրը ծած-



կեց նրանց, բայց շուտով դուրս յեկան ջրի յերեսը և սկսեցին հիսնալի լողալ:

Նրանք շարժում էյին իրենց թաթիկները և կարողանում էյին մնալ ջրի յերեսին, մինչև անգամ անճողների մոխրագույն ձուռտն ել լուղում եր մյուսների հետ:

— Վո՛չ, դա հնդկահավիկ չե, — ասում եր բաղը: — Տեսե՛ք, ինչպես լավ ե աշխատում թաթիկներով, ինչպես ուղիղ ե բռնում իրեն. դա իմ հարազատ բաղիկս ե. Ճշմարիտ, յեթե լավ դիտելու լինես, նա շատ սիրունիկն ե: Ռո՛պ-ռո՛պ: Դեհ, գնանք ինձ հետ, յես ձեզ կտանեմ բաղերի բակը, բայց ինձնից չհեռանաք, վոր վորքի տակ չընկնեք, մանավանդ, զգուշացեք կատվից:

Յեվ ահա նրանք գնացին բաղերի բակը:

Այնտեղ սարսափելի աղմուկ եր: Յերկու ընտանիք կռվում էյին իրար հետ ձկան մի գլխի համար, վորից ոգտվեց միայն կատուն:

— Այո, աշխարհում լավ ե կյանքը, —



ասաց բազերի մայրիկը և լիզեց կտուցը, վորովհետև ինքն ել կուզենար ստանալ ձկան համեղ գլուխը:

— Դե, շարժեք թաթիկներդ, — ասաց նա: — Տեսե՛ք, կբարևեք և խոնարհ գլուխ կտաք ա՛յ այն պառավ բազին: Նա սպանական տեսակից ե, դրա համար ել այնքան հաստ ե: Տեսնո՞ւմ եք, նրա վոտը կապված ե կարմիր փալասով: Դա նշանակում ե, վոր նրանից չեն ուզում բաժանվել, և նրան պետք ե ճանաչեն թե կենդանիները և թե մարդիկ: Դե՛հ, այժմ գլուխ տվեք և ասացե՛ք՝ ու՛սա:

Բազիկներն այդպես ել արին:

Իսկ նրանց չղջապատող մյուս բազերը նայում եյին և բարձրաձայն ասում.

— Տեսե՛ք, մի ամբողջ բազմություն ել յեկավ: Կարծես մենք այստեղ բիչ եյինք: Թո՛ւհ, ինչ անճոռնի բազիկ ե, նրան չենք ընդունի մեր մեջ:

Յե՛վ բազերից մեկն իսկույն և յեթ մոտեցավ բազիկին և կծեց նրա խզատակը:

— Հանգիստ թող նրան, — ասաց մայրը, — չե՛ վոր նա վոչ վոքի չի սնհանգստանում:

— Այո՛, բայց նա այնպես մեծ ե և անճոռնի, — պատասխանեց բազիկին կծող բազը, — վոր նրան պետք ե այստեղից բշե՛:

— Գեղեցիկ բալիկներ ունի այս մայրը, — ասաց վոտին կարմիր փալաս կապած պառավ բազը: — Նրանք բոլորն ել գեղեցիկ են, բացի մեկից, վորն անճոռնի յե: Յես կուզեյի, վոր նա յել ուղղվեր:

— Դա հնարավոր չե, — ասաց բազիկների մայրը: — Նա թեպետ գեղեցիկ չե, բայց շատ լավ բնավորություն ունի և լավ ել լողում ե, ինչպես ուրիշները: Յես կարծում եմ, վոր յերբ մեծանա, կգեղեցկանա և կփոքրանա: Նրա անճոռնիության պատճառն այն ե, վոր յերկար մնաց ձվի մեջ: — Յե՛վ նա կմշտեց նրա խզատակը և շոյեց գլուխը:

— Բացի այդ, նա արու բազ ե, — շարունակում եր մայրը, — և նրա համար այդ այնքան կարևոր չե: Յես կարծում եմ, վոր նա ուժեղ կլինի և լավ ապրուստ կունենա:



— Իսկ մյուսները հիանալի յեն, — ասաց պառավ բաղը: — Դե՛հ, յեղեք ինչպես ձեր տանը, իսկ յեթե ձկան գլուխ գտնեք, կարող եք բերել ինձ:

Յեւ բաղիկներն զգում էին իրենց, ինչպես տանը:

Բայց խեղճ բաղիկին, վորը վերջինն եր դուրս յեկել ձվից և անճոռնի յեր, ամեն կողմից կծում և կտցահարում էին բաղերն ու հավերը:

— Նա չափից դուրս մեծ ե, — ասում էին ամենքը:

Խեղճ բաղիկը չգիտեր, ուր գնար: Նրան վշտացնում եր իր անճոռնիությունը և այն, վոր դարձել ե բաղերի ամբողջ բակի ծիծաղի առարկան:

Այսպես անցավ առաջին օրը, և որեցոր վատանում եր նրա դրությունը: Ամենքը հալածում էին խեղճ բաղիկին, մինչև անգամ նրա հարազատ բույրերն ու յեղբայրները վատ էին վերաբերվում դեպի նա և միշտ ասում էին՝ «Յերանի՛ թե կատուն քեզ ուտեր, հրեշ», իսկ մայրն ասում եր՝ «Գոնե հեռու տեղ գնայիր, վոր աչքս չտեսներ քեզ»:

Բաղերը կծում էին նրան, հավերը՝ կրտսցահարում, իսկ թռչուններին կուտ տվող կինը հրում եր նրան վոտքով:



Բաղիկն այս ու այն կողմ վազեց բակում և թռավ պատի մյուս կողմը: Թփերում նստած թռչունները վախեցան և իրենց տղերից վեր թռան:

«Այդ նրանից ե, վոր յես շատ անճոռնի յեմ», — մտածեց բաղիկը և փակեց աչքերը, բայց իսկույն և յեթ առաջ վազեց: Նա ընկավ մի մեծ ճահիճ, վորտեղ ապրում էին վայրի բաղեր: Այնտեղ նա մնաց ամբողջ գիշերը:

Առավոտյան վայրի բաղերը նկատեցին նոր ընկերոջը:

— Ո՛վ ես դու, — հարցրին նրան:

Բաղիկը պատվում եր չորս կողմը և գլուխ եր տալիս:

— Ո՛հ, ինչպես անճոռնի յես դու, — ասում էին վայրի բաղերը: — Բայց մեզ համար դա նշանակություն չունի:

Այսպես նա մնաց այնտեղ յերկու որ, իսկ հետո յերկու վայրի սագեր, վորոնք նոր էյին ձվերից դուրս յեկել, շատ ուրախ էյին:

— Լսիր,— ասացին նրանք: Դու այնքան անճոռնի չես, վոր վոչ մի բանում մեզ չես խանգարի: Ուզում ես մեզ հետ ապրել և դառնայ չվող թռչուն:

— Վրզզզ... — լսվեց վերևից, և նույն րոպեյին յերկու սագերն ել սպանված ընկան յեղեգների մեջ, և ջուրը ներկվեց արյունով:


Վրզզզ... լսվեց կրկին, շատ սագեր դուրս թռան յեղեգների միջից և նորից լսվեցին կրակոցներ:

Կրակում էյին վորսորդները, վորոնք շրջապատել էյին ճահիճը, իսկ մի բանիսը նստել էյին ծառերին: Յեղեգները յերերվում էյին:

Խեղճ բադիկը վախից ծռել եր գլուխը, թևի տակ թազցնելու համար:

Նույն վայրկյանին նրա առջև կանգնած եր մի մեծ, սարսափելի շուն: Նրա լեզուն դուրս եր կախված յերախից, իսկ աչքերը փայլում էյին չարակամորեն: Նա դունչն ուղղակի դեմ տվեց բադիկին, ցույց տվեց իր սուր ատամները և հեռացավ, ձեռք չտալով նրան:





— Ո՛հ, ի՛նչ բախտավորութիւնն ե,— հառա-  
չեց բաղիկը: — Յես ա՛յնքան անճոռնի յեմ,  
վոր շունն անգամ զգվում ե ինձ կծել: Զ

Յեվ նա՛ հանդարտ պառկել եր իր տեղում,  
իսկ ճահճում շարունակվում եյին կրակոց-  
ները: Միայն կեսորին դադարեց կրակոցը,  
բայց խեղճ բաղիկը չեր համարձակվում տե-  
ղից բարձրանալ, մի բանի ժամ ել մնաց պառ-  
կած, և հետո միայն շորս կողմը նայեց: Նա  
արագ հեռացավ ճահճից: Վազում եր դաշ-  
տերով, մարգագետիններով, բայց ուժեղ փշող  
բամին խանգարում եր նրա վազքը:

Իրիկնադեմին նա հասավ մի աղբատ խրը-  
ճիթ: Այդ խրճիթն ա՛յնքան հին եր, վոր չգիտեր,  
վոր կողմն ընկնի և այդ պատճառով ել դեռ կան-  
գուն եր: Ուժեղ բամին ա՛յնպես եր փշում, վոր  
բաղիկն ստիպված եր հենվել իր պոչին: Յեղա-




նակն ավելի վատա-  
նում եր: Բաղիկը նկա-  
տեց, վոր խրճիթի դու-  
ռը դուրս ընկավ մեկ  
ծղխնուց և այնպես  
թեքվեց, վոր արան-  
քից կարելի յեր անցնել  
խրճիթներս: Նա այդ-  
պես ել արավ:

Այնտեղ պարում  
եր մի պառավ, վորն  
ուներ մեկ կատու և մեկ հավ: Կատուն,  
վորի անունը «Բալիկ» եր, գիտեր իր մեջքը  
ծռել, մլավել և մինչև անգամ կայծեր բաց  
թողնել, յերը նրան շոյում եյին մազին հա-  
կառակ: Հավի տոտիկները շատ փոքր եյին  
և ցածր, դրա համար ել նրա անունը դրել  
եյին «կարճատոտիկ»: Նա լավ եր ձու ածում,  
և պառավը սիրում եր նրան իր հարազատ  
զավակի պես:

Առավոտյան նրանք իսկույն նկատեցին  
ոտար բաղիկին, և կատուն սկսեց մլավել,  
իսկ հավը՝ կշկշալ:

— Ես ինչ հանելուկ ե,— ասաց պառավը  
և յետ նայեց, բայց վորովհետև նրա աչքերը  
լավ չեյին տեսնում, այդ պատճառով փոք-  
րիկ բաղիկին նա ընդունեց գեր բաղի տեղ,

վորը սխալմամբ եր  
ընկել նրա խրճիթը: —  
Այ բեզ հազվագյուտ  
բան, — շարունակում  
եր նա: — Հիմա յես կու-  
նենամ բաղի ձվեր,  
միայն թե դա արու  
բաղ չլիներ: Բայց վո-  
չինչ, այդ կիմանանք:



Պառավը բաղիկին  
թողեց յերեք շաբաթ փորձելու համար, բայց  
ձվեր չեյին յերևում: Կատուն տան տերն  
եր, իսկ հավն իրեն տանտիկին եր զգում:

— Կարո՞ղ ես ձու ածել, — հարցեց նա: —  
Վո՞չ: Դեհ ուրեմն ձենդ կտրիր:

Իսկ կատուն հարցրեց.

— Դու կարո՞ղ ես մեջքդ ծռել, մլավել  
և կայծեր բաց թողնել:

— Վո՞չ:

— Ուրեմն լռիր:

Բաղիկը կուչ յեկավ մի անկյունում: Նա  
սկսեց մտածել թարմ ողի, արևի փայլի մա-  
սին: Նա հանկարծ այնպես ուզեց լողալ  
ջրում, վոր չհամբերեց և այդ մասին հայտ-  
նեց հավին:

— Ինչ ե պատահել քեզ, — հարցրեց  
նա: — Յերևում է, բան չունես անելու:

Ձու ածիր կամ մլավիր, և ամեն ինչ կանցնի:

— Բայց չե՞ վոր այնքան լավ ե լողալ ջրում, — ասաց բաղիկը: — Ինչքան լավ ե, յերբ զգում ես, վոր ջուրը գլխավերևդ ե և սուզվում ես մինչև հատակը:

— Ինչ ասել կուզի, վոր լավ զվարճություն ե, — ասաց հավը. — գժվել ես, ինչ ե: Հարցրու գոնե կատվին, — նա իմ ծանոթներից ամենախելոքն ե, սիրում ե նա արդյոք լողալ կամ սուզվել: Հարցրու վերջապես մեր պառավ տանտիկնոջը, վորն ամենախելոքն ե աշխարհում: Ինչ ես կարծում, նա ուզում ե լողալ և գլխով սուզվել ջրի տակը:

— Դու ինձ չես հասկանում, — պնդում եր բաղիկը:

— Դեհ, արդեն յեթե մենք բեզ չենք հասկանում, ապա ո՞վ կարող ե բեզ հասկանալ: Դու, իհարկե, յերբեք կատվից կամ պառավից ավելի խելոք չես լինի, դեռ չխոսելով իմ մասին. կամակորուժյուն մի անի և շնորհակալ յեղիր այն ամենի համար, վոր բեզ համար արինք: Մի՞թե դու տաք սենյակում չես և վորևե բան չես կարող սովորել: Հավատա՛, յես բո բարին եմ ցանկանում: Դե ուրեմն, սկսիր ձու ածել, կամ սովորիր մլավել և կայծեր բաց թողնել:

— Ինձ թվում ե, վոր կշարունակեմ ճանապարհս աշխարհից աշխարհ:

— Համեցե՛ք, — պատասխանեց հավը:

Յե՛վ բաղիկը գնաց:

Նա լողում եր ջրում, սուզվում եր, իսկ մյուս թռչունները, նրա անճոռնիության համար, մոտ չեյին գալիս նրան:

Հասավ աշունը: Տերևներն անտառներում գեղեցին, թուխ գույն ստացան, իսկ բամին այնպես եր փչում, վոր նրանք պարում եյին ոդում: Վրա հասան ցրտերը:

Խեղճ բաղիկը նեղն եր ընկել:

Մեկ անգամ յերեկոյան թփերի միջից դուրս յեկավ գեղեցիկ մեծ թռչունների մի ամբողջ յերամ: Բաղիկը յերբեք այդպիսի սքանչելի արարածներ չեր տեսել: Նրանց վզերը յերկար եյին և ճկուն և նրանք բոլորն ել ճերմակ եյին ձյան պես: Դրանք կարապներ եյին: Նրանք տարօրինակ ճիւղ արձակեցին, թափ տվին իրենց հիանալի մեծ



թեւերը և թռան ցուրտ յերկրներից դեպի տաք յերկիրներ: Նրանք այնքան բարձրացան, վոր անճոռնի բաղիկի սիրտն ինչ վոր տարորինակ զգացում պատեց:

Նա անվի նման պտույտներ տվեց ջրում, վիզը յերկարացրեց դեպի կարապները և մի այնպիսի բարձր և տարորինակ ճիշ արձակեց, վոր ինքն ել վախեցավ:

Ո՛հ, նա չեր կարողանում մոռանալ հրաշալի բախտավոր թռչուններին, և հենց վոր նրանք չբացան նրա աչքերից, նա սուղվեց մինչև ջրի հատակը:

Իսկ ձմեռն այնպես ցուրտ եր, անասելի ցուրտ: Բաղիկն ստիպված եր անընդհատ լողալ, վորպեսզի բոլորովին չսառչի: Սառույցից ազատ մնացած տեղը, վորտեղ նա լողում եր, ամեն գիշեր ավելի ու ավելի փորանում եր: Այնպիսի սառնամանիք եր, վոր լճի սառույցը ճռճում եր:

Բաղիկն ստիպված եր անընդհատ աշխատել թաթիկներով, վորպեսզի սառույցը չծածկի իրեն: Վերջապես նա ուժասպառ յեղավ, անշարժացավ և սառած կպավ սառույցին:

Վաղ առավոտյան նրա կողքով անցնում եր մի գյուղացի: Նկատելով բաղիկին, մոտեցավ նրան, իր փայտե վռնամաններով ջարդեց



սառույցը և բաղիկին տարավ իր կնոջը: Այն-  
տեղ նա կենդանացավ:

Յերեխաներն ուզում էին խաղալ նրա  
հետ, իսկ բաղիկը կարծում էր, վոր ուզում  
են իրեն վիրավորել, և, վախեցած, նետվեց  
կաթով լիքը պուլիկի մեջ: Սենյակը կաթով  
մեկ յեղավ: Տանտիրուհին գոռաց և ձեռ-  
քերը թափահարեց:

Բաղիկը նետվեց յուղի տաշտի մեջ և ապա  
ալրով լիքը տակառի մեջ: Մի տեսնեյիք, թե  
ինչի յեր նման այնտեղից դուրս յեկած ժա-  
մանակ: Տանտիրուհին գոռաց և ունելիյով  
զարկեց նրան, յերեխաները, գլուխները կորց-  
րած, վազ էին տալիս սենյակում, ուզում էին  
բռնել բաղիկին, ծիծաղում էին և գոռում...

Հավ ե, վոր դուռը  
բաց եր — նա թռավ  
դեպի թփերը, նոր յե-  
կած ձյան մեջ և  
այնտեղ ընկավ թու-  
լացած:



Նա ընկած էր ճահճում, յեղեգների մեջ,  
յերբ արևը հորից տաքացրեց: Արտուտիկները  
յերգեցին—յեկավ գարունը:

Նա իսկույն թափահարեց իր թևերը,  
նրանք աղմկեցին և ուժով բարձրացրին  
նրան տեղից: Յեվ մինչև վոր նա հասկացավ,  
թե բանն ինչումն է, արդեն գտնվում էր մեծ  
պարտեզում, ուր խնձորենիները ծածկված  
էին ծաղիկներով և ուր անուշ բուրում էին  
լայն առունների վրա գտնվող յեղրեանու յեր-  
կար կանաչ ճյուղերից կախված ծաղիկները:  
Ո՛հ, ինչ լավ փչում էր այնտեղ գարնան հո-  
տը, ինչքան լավ էր այնտեղ: Խիտ թփերի  
միջից դուրս յեկան յերեք հիանալի կարապ-  
ներ: Նրանք փրեցին իրենց փետուրները և  
հանդարտ մտան ջուրը լողալու:

Բաղիկը ճանաչեց հիանալի թռչուննե-  
րին:

— Թռչեմ այդ հրաշալի թռչունների մոտ,  
և թող նրանք կտցահարեն սպանեն ինձ,  
վոր այդքան անճոռնի յեմ: Ավելի լավ է, վոր  
նրանք ինձ սպանեն, քան թե կտցահարեն  
հավերը, հարվածների յենթարկվեմ և տանջ-  
վեմ ձմեռվա ցրտից:

Նա մտավ ջուրը և լողաց դեպի հրաշալի  
թռչունների կողմը... Նրանք նկատեցին նրան և  
թևերը թափահարելով, մոտեցան նրան:

— Սպանեցեք ինձ,— առաց խեղճ թռչունը  
և խոնարհեցրեց գլուխը:

Յեվ ի՞նչ տեսավ նա մաքուր ջրում: Նա  
տեսավ այնտեղ իր պատկերը: Բայց դա  
արդեն այն անճոռնի, տգեղ և այլանդակ  
թռչունը չէր, այլ՝ հիանալի կարապ:

Մի քանի յերեխաներ վազելով յեկան  
պարտեզը: Նրանք հաց և կուտ էին ձգում  
ջուրը: Նրանցից ամենափոքրը բացականչեց՝

— Ահա և նորը:

Մյուս յերեխաները հրճվում էին նրա  
հետ:

— Այո, սա նորն է:— Նրանք ծափ էին  
տալիս և պարում, կանչում էին իրենց հորն  
ու մորը, հաց էին ձգում ջուրը և անվերջ  
կրկնում—նորն ամենից լավն է:— Յեվ կա-  
րապները խոնարհվեցին նրա առաջ:

Ц. 1936.  
Акт № 126  
Вклад. л. —

281

Ответ. редактор Г. А. ПОТЕНЦ Пом. техред. Д. М. ДЖИНИБАЛАН  
Художник В. ВОРОНЕЦКИИ

Изд. № 288/4548. Сдано в производство 25 IV 1936 г. Подписано в  
печать 27 V 1936 г. Формат 62x94  $\frac{1}{16}$ . Объем 1  $\frac{1}{2}$  п. л. (0,75 б. л.) Упол-  
крайлит №00-11421. Заказ № 77. Тираж 1500

Типография краевого армянского издательства „ГРО“ и переплет-  
ная фабрика „Красный переплетчик“ в г. Ростове н-Дону.



ՀՀ Ազգային գրադարան



NL0390091

Цена 65 коп.  
400.

47437

1593

Переплет 25 коп.  
400.



На армянском языке

Г. Х. АНДЕРСЕН

ГАДКИЙ УТЕНОК

РИСУНКИ В. ВОРОВЕЦКОГО

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ  
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО  
Ростов н-Д Буденновский пр. № 30

Հ. Բ. Ա. Պ. Պ. Լ. Բ. Ս. Ը.  
Ռուսալի-Դոն, Մարտիկալաշ, № 58  
ԳՐԱԿԵԼՏԻՐԱՆ (ԿԵԼԴՈՅԵԼՏԻՐ)